



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կ. Մարդանյանի անվան Բերդի թիվ 3 հիմնական

Թեմա՝ Նախագծային ուսուցման արդյունավետությունը

տարրական դպրոցում

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Թեհմինե Մելքունյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1. Նախագծային աշխատանքի ընդհանուր բնութագիր	5
1.1. Ի՞նչ է <<Նախագծային ուսուցում>>-ը	5
1.2. Նախագծային աշխատանքի նպատակները	8
1.3. Նախագծային աշխատանքին ներկայացվող պահանջները	9
1.4. Նախագծային աշխատանքի փուլերը.....	10
1.5. Նախագծի տեսակները	12
1.6. Նախագծային մեթոդի կիրառման արդյունավետությունը.....	13
Գլուխ 2. Նախագծային ուսուցման արդյունավետությունը տարրական դպրոցում	16
2.1. Հետազոտական աշխատանքի ընդհանուր բնութագիր	16
2.2. Հետազոտության արդյունքների վերլուծություն	17
Եզրակացություն	19
Առաջարկություններ.....	20
Գրականության ցանկ	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օրեցօր զարգացող տեխնոլոգիական հմտությունները նոր հնարավորություն են տալիս՝ ուսուցումն ավելի արդյունավետ դարձնել: Հիմնական խնդիրը այնպիսի անհատականության ձևավորումն է, որը կարող է ստեղծագործ մտածել և ոչ ստանդարտ լուծումներ փնտրել, որը հակված է սովորելու իր ողջ կյանքի ընթացքում:

Այսօր պետք է ներդաշնակորեն համադրել ուսումնական գործունեությունը, որի շրջանակներում մշակում են հիմնարար գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ, և հետազոտական, ստեղծարար գործունեությունը՝ զարգացնելու աշակերտների ճանաչողական ակտիվությունը, ոչ ստանդարտ խնդիրներ լուծելու ունակությունը:

Հետազոտության նպատակն է պարզել՝ որքանով է արդյունավետ նախագծային ուսուցումը տարրական դպրոցում:

Հետազոտության առջև դրված խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել նախագծային գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:
2. Տարրական դպրոցի 3-րդ դասարանի աշակերտների հետ մշակել և գործնականում իրականացնել «Հետազոտենք մեր մոլորակը» թեմայով նախագիծ:
3. Ամփոփել և հանրայնացնել հետազոտության արդյունքները՝ նպաստելով ուսուցման արդյունավետության բարձրացմանը տարրական դպրոցի 3-րդ դասարանում:

Հետազոտության վարկածը. Մենք կարծում ենք, որ տարրական դպրոցում ևս կարելի է արդյունավետ իրականացնել նախագծային ուսուցում:

Հետազոտության մեթոդները՝ տեսական, հարցման, դիտարկման:

Հետազոտության ընտրանքը՝ տարրական դպրոցի աշակերտներ:

Ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելով Ս. Հակոբյան, Ա. Փոքրիկյան, Շ. Ղազարյան <<Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ>>, Горячев А.Д., Г.А. Иглина <<Все узнаю, все смогу>>, Stavroula Kaldi, Diamanto Filippatou & Christos Govaris <<Project-based learning in primary schools: effects on

pupils' learning and attitudes>> գրքերը և մի շարք էլեկտրոնային աղբյուրներ՝ սույն աշխատանքում ներկայացրել եմ <<Նախագծային ուսուցման արդյունավետությունը տարրական դպրոցում>> թեման:

Գլուխ 1. Նախագծային աշխատանքի ընդհանուր բնութագիր

1.1. Ի՞նչ է «Նախագծային ուսուցում»-ը

<<Նախագիծ>> ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է <<դեպի առաջ>>, ճանապարհ դեպի նպատակ:

Նախագծային մեթոդը անվանում են նաև <<խնդիրների մեթոդ>>: Այն դասվում է փոխներգործուն մեթոդների շարքին: Այն նպաստում է սովորողների մեջ այնպիսի կարողությունների զարգացմանը, ինչպիսիք են՝ ճանաչողական, ինքնուրույն գործունեության և համագործակցային կարողությունները, խթանում է նրա հետաքրքրասիրությունը, ստեղծարարությունը, նպաստում է տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, խնդիրներ ձևակերպելու և դրանց լուծում տալու կարողությունների զարգացմանը: Նախագիծը հնարավորություն է տալիս առարկայական ուսումնական նյութի յուրացումը դարձնել խորը նպատակային, սովորողների կեսափործից բխող, իրական կյանքին վերաբերող: Նախագծի շրջանակում սովորողներն իրենք են <<կառուցում>> իրենց գիտելիքը՝ միմյանց և ուրիշների հետ փոխհարաբերվելու, համագործակցելու միջոցով:

Ուսումնական նախագիծը սովորելու ինտերակտիվ եղանակ է, որտեղ սովորողները ինքնուրույն հետազոտություն են կատարում անհատական և խմբային աշխատանքի ձևով և անմիջապես ներառվում են ակտիվ իմացական գործընթացների մեջ, ինքնուրույն ձևակերպում խնդիրները, իրականացնում անհրաժեշտ տեղեկույթի հավաքագրում, պլանավորում խնդրի լուծման տարբերակներ, եզրակացություններ անում, վերլուծում սեփական գործունեությունը՝ արդյունքում ձեռք բերելով նոր գիտելիքներ և կենսափորձ: Մեթոդը կարելի է կիրառել ուսուցման ցանկացած փուլում, տարբեր տարիքային խմբերում: Այն հարմար է բոլոր ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս և այդ պատճառով համարվում է համապիտանի մեթոդ:

Նախագիծը ենթադրում է նորի ներդրում իրականացման հստակ հրահանգներով: Դա այն աշխատանքն է, որը կատարվում է միանգամից՝ եզակի արդյունք ստանալու համար: Նախագիծը փոխկապակցված իրադարձությունների հաջորդականությունն է, որը տեղի է ունենում սահմանված սահմանապակ ժամանակահատվածում և ուղղված է եզակի, բայց միևնույն ժամանակ որոշակի արդյունքի հասնելուն:

Ցանկացած աշխատանք իրականացվում է այն ժամանակ, երբ կարիք կա ինչ-որ նոր բանի, կամ բարելավելու ինչ-որ բան, որ արդեն կա:

Նախագիծը ենթադրում է բազմաբնույթ աշխատանք, ընդ որում հետաքրքիր, գրավիչ, ինչն էլ առավել լայն հնարավորություն է ընձեռում բոլոր սովորողների՝ այդ աշխատանքներին ակտիվ մասնակցությանն ու ներգրավմանը, բոլոր սովորողների ներառմանը, ինչպես նաև նրանց համար հավասար պայմանների ապահովմանը: Վերջինս ենթադրում է սովորողների, այդ թվում նաև հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցողների անհատական առանձնահատկությունների, կրթական կարիքների և հետաքրքրությունների, նրանցից յուրաքանչյուրի ուսումնառության ոճի, դրանց ուժեղ կողմերի ու հնարավորությունների իմացում և խրախուսում, սովորողներին՝ նախագծային աշխատանքներին մասնակից դարձնելու և որոշակի խնդիրներ լուծելու, կոնկրետ աշխատանքներ կատարելու առումով: [Ս. Հակոբյան, Ա. Փոքրիկյան, Շ. Ղազարյան, 2019]

Նախագծային գործունեությունը դուրս է գալիս ուսումնական առարկայի սահմաններից և ընդգրկում է շրջակա աշխարհի այն ոլորտները, որոնք առավել հետաքրքրություն են ներկայացնում սովորողին:

Մեթոդի հիմքում ընկած է սովորողների իմացական կարողությունների զարգացումը, ձևավորել իրենց գիտելիքները ինքնուրույն կառուցելու կարողություններ, կողմնորոշվել տեղեկատվական հոսքերում, զարգացնել ինքնավերլուծության և հետազոտական կարողություններ, համագործակցային աշխատանքի և կառավարման հմտություններ, հաղորդակցական որակներ և, վերջապես, սեփական աշխատանքը ներկայացնելու կարողություններ:

Նախագծային աշխատանքը թույլ է տալիս.

- ձևավորել հետազոտական, հաղորդակցման, համագործակցության հմտություններ,
- բացահայտել երեխայի ստեղծագործական ունակությունները
- երեխաներին տրամադրել հուզական և բովանդակային օգնություն՝ իրենց ինքնահաստատման համար
- բարելավել շփումը աշակերտների, ծնողների հետ:

Նախագծային ուսումնառությունը սովորողին դարձնում է շփվող, ստեղծարար, օգնում է կիրառել տեսական գիտելիքները: Այսպիսի աշխատանքի արդյունքում ձեռք բերված գիտելիքները հիմնված են փորձի վրա: [Stavroula Kaldi, Diamanto Filippatou & Christos Govaris, 2009]

Այսպիսով՝ նախագծի միջոցով կարելի է համալիր մոտենալ և միաժամանակ լուծել մի շարք խնդիրներ՝ պահպանելով ժամանակակից մանկավարժության, կրթության կարևորագույն սկզբունքները.

- ✓ Մասնակցային կրթություն և հավասար պայմաններ բոլոր սովորողների համար. սովորողի հետաքրքրությունների, հնարավորությունների ու պրակտիկ փորձի հաշվառում
- ✓ Սովորողակենտրոն ուսումնառություն. սովորողների ակտիվ մասնակցություն ուսուցման և ուսումնառության գործընթացին, <<գիտելիքների կառուցման>> գործընթացին, անձնական պատասխանատվություն խմբային աշխատանքներում
- ✓ Կրթվելու, գործելու միջոցով հմտությունների և կարողությունների շեշտադրում. կարողունակությունների ձևավորում
- ✓ Կենսական խնդիրներ լուծող գիտելիքների, այլ ոչ <<բանկային գիտելիքների >> ձեռքբերում
- ✓ Շփման և հաղորդակցության հմտությունների, հաղորդակցության և փոխօգնության կարողությունների ձևավորում:

1.2. Նախագծային աշխատանքի նպատակները

Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին հնարավորություն տալ պրակտիկ խնդիրների կամ պրոբլեմների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ: Այս գործում ուսուցչին հատկացվում է նախագիծը մշակողի, կոորդինատորի, խորհրդատուի և փորձագետի դերը:

Մեթոդի առաջնային նպատակներն են.

- ✓ Խթանել սովորողի ինքնագարգացումը՝ նոր փորձ ձեռք բերելու և գիտելիքները կիրառելու համար: Ընդգրկվելով ուսումնական նախագծերում՝ սովորողները սովորում են կատարել

հետազոտություններ, հավաքել տարաբնույթ տեղեկատվություն, կողմնորոշվել տեղեկատվության <<ծովում>>, ընտրել անհրաժեշտ նյութերը, տարանջատել գլխավորն ու երկրորդականը, համակարգված և հստակ ձևակերպել իրենց մտքերը, գրավոր ստանալ և ուղարկել մեծ քանակությամբ տեքստային, թվային և գրաֆիկական տեղեկատվություն, վերլուծել ստացված տեղեկատվությունը և առաջադրել նոր մտքեր /գաղափարներ/:

- ✓ Ապահովել սովորողների փոխհամագործակցությունը հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում: Այն պետք է լիովին համապատասխանի խմբային աշխատանքի արդյունավետ կազմակերպման պայմաններին:

[Ս. Հակոբյան, Ա. Փոքրիկյան, Շ. Ղազարյան, 2019]

1.3. Նախագծային աշխատանքին ներկայացվող պահանջները

Նախագիծը պիտի ունենա.

- ✓ Թեմա և ուսումնասիրման ենթակա թեմայի հետ կապված հարցադրումներ
- ✓ Աշխատանքի փուլեր /նախնական պլանավորում, գործողությունների ծրագիր, ժամկետներ, միջանկյալ հաշվետվություններ/
- ✓ Աշխատանքի վերջնաժամկետ
- ✓ Ակնկալվող արդյունք /հրապարակախոսություն, տեսաֆիլմ, ձեռնարկ, փաթեթ, շտեմարան, հոդված, ներկայացում և այլն/:

Պետք է հստակեցվեն սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջները: Ահա դրանք.

- ✓ Տեքստի վերլուծում, բովանդակության քննարկում, եզրակացության ձևակերպում
- ✓ Ասված խոսքի հիմնավորում, ստեղծագործական մտածողության առկայություն
- ✓ Մասնագիտական բառարանների, գիտահանրամատչելի և հանրագիտարանային գրականության, Վիքիբառարանի և հանրագիտարանային հայալեզու, ինչպես նաև օտարալեզու կայքերի գործածում

- ✓ Կարդացած տեքստերի համալրում, դրանց տարբերությունների քննարկում, եզրակացություն-հետևություն անելու առնվազն փորձ:

Նախագիծը սկսվում է մասնակիցների մոտիվացիայից՝ հաշվի առնելով նրանց նախասիրություններն ու շնորհները, ինչպես նաև տարիքային առանձնահատկությունները: Սովորողի կարծիքը հաշվի առնելը սկզբունք է:

Նախագծի ղեկավարը կատարում է նախագծի նախնական պլանավորում, ապահովում է առաջնային գիտելիք պարունակող տեղեկատվությունը, որը կողմնորոշում է սովորողներին՝ ինչպես, ինչ ուղղությամբ սկսել աշխատանքը, տալիս է համացանցային հղումներ, գրքերի անուններ և այլ անհրաժեշտ նախնական տեղեկություն, հետևում է նախագծի աշխատանքի ընթացքին և ավարտին է հասցնում նախագիծը՝ վերջնական արտադրանքի տեսքով:

Առարկայական ուսուցիչն ապահովում է մասնագիտական խորհրդատվություն սովորողին, օգնում է որոնել տեղեկատվական գրականություն, այլ նյութեր, մեդիանյութեր, օգնում է կոնկրետ հարցեր լուծելիս առաջացած դժվարությունները հաղթահարել, փոխանցել համապատասխան հմտություններ: [Ս. Չակոբյան, Ա. Փոքրիկյան, Շ. Ղազարյան, 2019]

1.4. Նախագծային աշխատանքի փուլերը

Նախագծային աշխատանքի կարևորագույն փուլերն են .

1. Պլանավորում, նախագծում.

- ✓ Նպատակի, խնդիրների ճշտում
- ✓ Թեմյի ընտրություն, ուսումնասիրություն
- ✓ Գործունեության հերթականության ճշտում
- ✓ Ակնկալվող արդյունքների ճշտում

2. Իրականացում.

- ✓ Ընթացքի դիտարկում
- ✓ Անդրադարձ կատարելու կարևորություն

3. Արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, հրապարակում:

Կարճաժամկետ և երկարաժամկետ նախագծերում աշխատելիս սովորողները ձեռք են բերում նոր գիտելիքներ և հմտություններ: Նրանք ստանում են այս կամ այն առաջադրանքը, ձևավորում խմբեր և կազմակերպում նախագծի կատարման աշխատանքները: Որպես նախագծի ամփոփում ներկայացնում են կոնկրետ արդյունքներ՝ տեսանյութ, աշխատանքի ցուցադրություն, համակարգչային ծրագրի յուրացում, հետազոտության փորձ, թղթապանակ և այլն: Նախագծի կատարման ընթացքը վերահսկվում է դասավանդողի կողմից, ով առկա և առցանց հետևում և մասնակցում է աշխատանքներին: Նախագծային աշխատանք կատարելը հարմար է հատկապես նախագծեր իրականացնելիս, որովհետև ժամանակ կա ուսումնասիրություն անելու:

1-ին փուլ: Ստեղծվում են աշխատանքային խմբեր: Նախագիծը իրականացնում են խմբով, անդամների միջև աշխատանքի բաժանում է լինում, խումբը ունենում է ղեկավար, որը նաև համակարգում է մյուսների աշխատանքը: Նախագծի կատարումը վերահսկելու համար կազմվում է աշխատանքային ժամանակացույց՝ միջանկյալ արդյունքներով.

- ✓ Գրանցվում են արդյունքին ներկայացվող պահանջները
- ✓ Նախագծի խնդիրները արդյունքին հասնելու ճանապարհին հանդիպող դժվարություններն են:

2-րդ փուլ:

- ✓ Նախագծի իրականացման ընթացքում կատարվում են հետազոտական աշխատանքներ
- ✓ Նախագծի արդյունքների ներկայացում
- ✓ Աշխատանքների գնահատում
- ✓ Ստացված արդյունքի համապատասխանությունը սկզբնական պահանջներին:

3-րդ փուլ:

- ✓ Նախագիծը ենթադրում է վերանայում
- ✓ Ծրագրի կիրառման արդյունքում նկատված թերությունների, ստացված դիտողությունների, առաջարկությունների քննարկում և համապատասխան փոփոխությունների կատարում:

Կատարված աշխատանքի ներկայացում: Սովորողը պիտի կարողանա ներկայանալ և ներկայացնել:

- ✓ Համառոտ նկարագրել կատարված աշխատանքը՝ ինչ խնդիր են դրել, ինչու են ընտրել հենց այդ թեման, ինչպիսին է աշխատանքի արդյունքը, որն է նախագծի արդյունավետությունը:
- ✓ Խոսել նախագծի ընթացքում ծագած դժվարությունների և աջակցությունների մասին, հիմնավորել՝ աշխատանքի ընթացքում ինչն են համարում արդյունավետ, իսկ ինչը՝ օգտակար:
- ✓ Վերաբերմունք արտահայտել՝ կոնկրետ ներկայացնողի համար որքանով է օգտակար այդ նախագծին մասնակցելը, ինչ սովորեց, ինչ ճշտեց, ինչ է կարողանում ավելի լավ անել աշխատանքը կատարելուց հետո, ինչը ինքը կկիրառի հետագայում: [Ս. Հակոբյան, Ա. Փոքրիկյան, Շ. Ղազարյան, 2019]

1.5. Նախագծի տեսակները

Նախագծերը կարելի է տեսակավորել ըստ մի քանի բնութագրիչների: Դրանք են՝

1. Ըստ բովանդակային ոլորտի՝

- **Մոնոնախագիծ:** Ընդգրկում է միայն մեկ առարկա: Նախագիծն իրականացվում է տվյալ առարկայի կոնկրետ թեմայի շրջանակներում:
- **Միջառարկայական:** Ընդգրկում է մի քանի առարկաներ, որոնք առնչվում են տվյալ թեմային:
- **Վերառարկայական:** Իրականացվում է ինտեգրված դասընթացների ուսումնասիրման, ստեղծագործական աշխատանքի հիման վրա:
- **Ամփոփիչ,** երբ նրա կատարման արդյունքների հիման վրա գնահատվում է սովորողների կողմից որոշակի ուսումնական նյութի յուրացման մակարդակը:
- **Ընթացիկ,** երբ ինքնակրթության և նախագծային գործունեության համար առանձնացվում է ուսումնական նյութի մի մասը միայն:

2. Ըստ մասնակիցների քանակի՝

- ***Անհատական:*** Նման նախագծերը արդյունավետ է օգտագործել որպես ստուգարքային կամ ամփոփիչ աշխատանք, քանի որ դրանք ներկայացնում են յուրաքանչյուր սովորողի գիտելիքներն ու հմտությունները:
- ***Չույգերով կամ խմբային:*** Նախագիծն իրականացվում է զույգի կամ խմբի կողմից, մասնակիցներն ունենում են հստակ դերեր:
- ***Չեռահաղորդակցական:*** Այս դեպքում աշխատանքը կազմակերպվում է համացանցի միջոցով:

3. Ըստ կատառման տևողության՝

- ***Կարճաժամկետ:*** Այս նախագծերի տևողությունը մեկից մինչև մի քանի դաս է: Նման նախագծի իրականացման միջին տևողությունը կարող է լինել մեկ շաբաթից մինչև մեկ ամիս:
- ***Երկարաժամկետ:*** Այս նախագծի տևողությունը մեկ ամսից մի քանի ամիս է: Գործընթացի ավելի մեծ արդյունավետության համար անհրաժեշտ է նախագիծը բաժանել որոշակի տրամաբանական փուլերի, որոնց կատարումից հետո սովորողը պարտավոր է անվերապահորեն հաշվետու լինել: [A.Д. Горячев, Г.А. Иглина. 2010.]

1.6. Նախագծային մեթոդի կիրառման արդյունավետությունը

Մեր դպրոցներում վերջին տասնամյակի ամենանշանակալի նորամուծություններից է նախագծային մեթոդի կիրառումը:

Նախագծային մեթոդն ունի մի շարք առավելություններ՝ սովորողների մոտ առավել լավ են բացահայտվում հետազոտական հմտությունները, իրականացվում է տեղեկատվության ինքնուրույն փնտրում և գիտելիքների համալրում: Նախագծային մեթոդի կիրառումը թույլ է տալիս լուծել տարբեր դիդակտիկ խնդիրներ: Այն լավ համատեղելի է կրթության զարգացման տարբեր մոդելների հետ:

Նախագծային ուսուցման արդյունավետությունը բավականին բարձր է: Աշխատանքների պլանավորումը մեծապես նպաստում է դրանց հաջող իրականացմանը:

Նախագծային աշխատանքը նաև հետաքրքիր է նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողները էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել իրար, ընկերանում են, իրար ուսումնասիրում-բացահայտում են, իրարից սովորում են, գնահատում են <<ընկերություն>> կոչվածը, հասկանում են դրա առավելությունները: Մի խոսքով՝ նախագծի վրա աշխատելու ընթացքում առավել ցայտուն են դառնում սովորողի ունակությունները:

Նախագծային աշխատանքի արդյունքում սովորողները պետք է միասին ստեղծեն շոշափելի արդյունք:

Նախագծային գործունեությունը հնարավորություն է տալիս զարգացնել սովորողների մտածողությունը:

Նախագծային ուսուցման իրականացման ընթացքում.

- ✓ Սովորողները դառնում են գործուն մասնակիցներ և <<խոսքից անցնում են գործի>>, միասնական խնդրի լուծման և արդյունքի հասնելու համար կոնկրետ օրինակով տեսնում և համոզվում են, որ միավորվում են բոլորը՝ թե՛ իրենք, թե՛ մանկավարժները, թե՛ ծնողներն ու համայնքի տարբեր ներկայացուցիչներ
- ✓ Սովորողների մոտ ձևավորվում է հանդուրժողականություն և փոխադարձ վստահություն, համատեղ աշխատանքի ընթացքում սկսում են ավելի լավ ճանաչել իրենց և իրենց ընկերներին, և հետևաբար հարգել և ընդունել իրենց ընկերներին, նրանց հնարավորությունները
- ✓ Խմբերի անդամները համագործակցում են, փոխանակում և վերլուծում են տեղեկություններ, կարծիքներ, մշակում են քայլեր, ապահովում են հետադարձ կապ
- ✓ Խմբի յուրաքանչյուր անդամ կրում է պատասխանատվություն ուսումնասիրության արդյունքների համար
- ✓ Նախագծերը հնարավորություն են տալիս ճանաչել և հետևաբար ավելի սիրել իրենց ծննդավայրը, պատասխանատվություն կրել, տեսնել ու գնահատել իրենց համայնքի խնդիրները:

Գլուխ 2. Նախագծային ուսուցման արդյունավետությունը տարրական դպրոցում

2.1. Հետազոտական աշխատանքի ընդհանուր բնութագիր

Հետազոտության նպատակն է պարզել՝ որքանով է արդյունավետ նախագծային ուսուցումը տարրական դպրոցում:

Հետազոտության առջև դրված խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել նախագծային գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:
2. Տարրական դպրոցի 3-րդ դասարանի աշակերտների հետ մշակել և գործնականում իրականացնել «Հետազոտենք մեր մոլորակը» թեմայով նախագիծ:
3. Ամփոփել և հանրայնացնել հետազոտության արդյունքները՝ նպաստելով ուսուցման արդյունավետության բարձրացմանը տարրական դպրոցի 3-րդ դասարանում:

Հետազոտության վարկածը. Մենք կարծում ենք, որ տարրական դպրոցում ևս կարելի է արդյունավետ իրականացնել նախագծային ուսուցում:

Հետազոտության մեթոդները՝ տեսական, հարցման, դիտարկման:

Հետազոտության ընտրանքը՝ տարրական դպրոցի աշակերտներ:

Մենք երկարաժամկետ նախագծային ուսուցում իրականացրինք 3-րդ դասարանում: Հետազոտությունն իրականացվեց «Ես և շրջակա աշխարհը» առարկայից «Հետազոտենք մեր մոլորակը» թեմայով: Թեման ուներ 10 ենթաթեմա՝

1. Երկրի մակերևույթը
2. Երկրի օդային «հագուստը»
3. Ցամաք և օվկիանոս
4. Մասշտաբ և պայմանական նշաններ
5. Ինչպես կողմնորոշվել տեղանքում
6. Մեզ սնող հողը
7. Կենսատու ջուրը

8. Գիշեր և ցերեկ

9. Բնության երևույթներ: Մթնոլորտային տեղումներ: Ապահովությունը բնության գրկում


10. Բնության բարիքները

Դասարանի 26 աշակերտները բաժանվեցին 5 խմբի, և յուրաքանչյուր խումբ ստացավ ընդհանուր թեմայի 10 ենթաթեմաներից 2-ը: Յուրաքանչյուր ենթաթեմայի ուսումնասիրությանը հատկացվեց 2 շաբաթ:

Քանի որ աշխատանքն իրականացնողները 3-րդ դասարանցիներ էին, նրանց նախ տրվում էր մանրամասն ինֆորմացիա ուսումնասիրվող նյութի մասին, այնուհետև նրանք ստանում էին հանձնարարություն՝ կատարել տեսական և գործնական ուսումնասիրություններ տրված թեմայի շուրջ, այսինքն՝ նրանք վեր կայքերից դուրս էին բերում ինֆորմացիա, այն միավորում դպրոցում ստացած իրենց ինֆորմացիայի հետ, վերաշարադրում և նկարագրում: Եվ այսպես ուսումնասիրվեցին բոլոր 10 ենթաթեմաները: Աշխատանքի ավարտին ստեղծվեց բավականին ծավալուն թղթապանակ, որը համատեղ աշխատանք է և որում ընդգրկված է ամբողջական հետազոտությունը: Աշխատանքի ավարտին յուրաքանչյուր երեխայի համար գրվեց գրախոսական իր կատարած աշխատանքի բնութագրմամբ:


2.2. Հետազոտության արդյունքների վերլուծություն

Մեր հետազոտությանը զուգահեռ նախագծային աշխատանք իրականացնում էին նաև 2-րդ դասարանցիները: Հետազոտության ավարտին հարցում իրականացվեց 4 դասարաններում /2ա, 2բ, 3ա, 3բ/, պարզելու համար, թե աշխատանքը որքանով էր հետաքրքիր, ուսուցանող, ուրախ և հաճելի: Հարցման արդյունքների մոտավոր պատկերը դիագրամների տեսքով ներկայացված է հավելված 1-ում:



Աղյուսակ 1

Ամփոփելով հարցման արդյունքները մեկ ընդհանուր պատկերի մեջ՝ հավելված 2-ում տեսնում ենք, որ հարցված 97 աշակերտների 98%-ը նախագծային ուսուցմանը մասնակցել է հաճույքով և ուրախությամբ, աշխատանքը նրանց համար եղել է հետաքրքիր և ուսուցանող:



Աղյուսակ 2

Եզրակացություն

Ելնելով այն հանգամանքից, որ նախագծային ուսուցումը նպաստում է սովորողի ինքնուրույնության և ինքնավստահության զարգացմանը, նրան դարձնում է ավելի ընկերասեր ու հանդուրժող, ձևավորում է օբյեկտիվ ինքնագնահատական՝ մենք իրականացրինք նախագծային ուսուցում տարրական դպրոցի սովորողների հետ:

Մեր փորձառությանը եկանք այն եզրահանգմանը, որ տարրական դպրոցի սովորողների համար կարևոր է մեծահասակի աջակցությունը, ուղղորդումը, վերահսկումը արդյունավետ հետազոտական աշխատանք իրականացնելու համար:

Ելնելով հետազոտության արդյունքների վերլուծությունից՝ հաստատվեց հետազոտության վարկածը՝ տարրական դպրոցում ևս կարելի է արդյունավետ իրականացնել նախագծային ուսուցում:

Այսպիսով հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ սովորողների համար նախագծային աշխատանքը չափազանց հետաքրքիր, ուրախ, ուսուցանող և հաճելի աշխատանք է:

Առաջարկություններ

Հաշվի առնելով տարրական դպրոցում սովորողների տարիքային առանձնահատկությունները՝ առաջարկում ենք տարրական դպրոցում իրականացնել փոքրիկ նախագծեր սովորողների համար մատչելի որոշակի թեմաներից, ինչը կնպաստի, որ նրանք ձեռք բերեն փորձառություն և ուսումնառության հետագա տարիներին կարողանան իրենց հետաքրքրող թեմաների շրջանակներում արդյունավետորեն կիրառել նախագծային աշխատանք՝ արդեն առանց մեծահասակների անմիջական աջակցության:

Նախագծային աշխատանքի կատարումը նպաստում է սովորողի ինքնուրույնության և ինքնավստահության զարգացմանը, նրան դարձնում է ավելի ընկերասեր ու հանդուրժող, ձևավորում է օբյեկտիվ ինքնագնահատական, զարգացնում է քննադատական մտածողությունը, վերլուծելու, ստուգելու, փնտրելու կարողությունները, ուստի նպաստում է նաև նրա՝ որպես անհատի, որպես քաղաքացու կերտմանը:

Գրականության ցանկ

1. Ս. Հակոբյան, Ա. Փոքրիկյան, Շ. Ղազարյան <<Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ>>, 2019
2. Горячев А.Д., Г.А. Иглина <<Все узнаю, все смогу>>, 2010
3. Stavroula Kaldi, Diamanto Filippatou &Christos Govaris <<Project-based learning in primary schools: effects on pupils' learning and attitudes>>, 2009
4. tabrik.ru
5. dpir.mskh.am
6. harutyunyanahitt.wordpress.com
7. anahit75.wordpress.com